18 դեկտեմբերի 2014 թվականի N 1515 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների, ինչպես նաև 15-րդ հոդվածի 9.1-ին մասին, 19-րդ հոդվածի 3-րդ կետին, 23-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին, «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 3-րդ, 6-11-րդ հոդվածներին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի N 1346-Ն որոշմանը համապատասխան Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ո ւ մ է.

1. Սահմանել՝

1) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

ա. N 4 հավելվածով նախատեսված դեֆիցիտի (պակասուրդի) տարեկան գումարների ֆինանսավորման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների և դրանց առանձին տարրերի՝ համաձայն N 1 հավելվածի,

բ. 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների տարեկան մուտքերի հավաքագրման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի՝ համաձայն N 2 հավելվածի,

գ. 7-րդ հոդվածով հաստատված տարեկան հատկացումների կատարման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի՝ համաձայն N 3 հավելվածի,

դ. 8-րդ հոդվածով հաստատված տարեկան հատկացումների կատարման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N 4 հավելվածի,

ե. N 1 հավելվածով նախատեսված տարեկան հատկացումների կատարման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի, դրանք իրականացնող մարմինների և բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝ համաձայն N 5 հավելվածի,

զ. 6-րդ հոդվածով հաստատված եկամուտների առանձին տեսակների գծով տարեկան մուտքերի հավաքագրման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ ըստ դրանց գանձման համար պատասխանատու պետական կառավարման մարմինների՝ համաձայն N 6 հավելվածի,

է. N 2 հավելվածով ըստ առանձին համայնքների բաշխված 2015 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների տարեկան գումարների և Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2013 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով գումարների հատկացման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ համաձայն N 7 հավելվածի,

ը. N 3 հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի 2015 թվականի ծախսերի նախահաշվի կատարման եռամյակային (աճողական) համամասնությունները՝ համաձայն N 8 հավելվածի.

2) որ 2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների առանձնացված ստորաբաժանումների (գործակալությունների և տեսչությունների), ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպված պետական հիմնարկներին վերապահված՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով սահմանված ծախսային ծրագրերն իրականացնող գործադիր իշխանության մարմնի լիազորությունները վերապահվում են Հայաստանի Հանրապետության այն պետական կառավարչական հիմնարկներին, որոնց առանձնացված ստորաբաժանումներն են տվյալ գործակալությունները կամ տեսչությունները կամ, որոնք տվյալ պետական ոչ առևտրային կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմիններն են.

3) որ 2015 թվականի ընթացքում պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպված պետական հիմնարկների (բացառությամբ այն հիմնարկների, որոնց ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսվում է իրականացնել պետական գնումների ձևով) գրանցման պահից այդ հիմնարկների համար «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջոցները տրամադրվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածով՝ տվյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերի հիման վրա: Սույն ենթակետում նշված դեպքերի վրա չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշման գործողությունը: Ընդ որում, մինչև պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպումը «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջոցների սահմաններում վերակազմակերպվող պետական հիմնարկներին տրամադրված հատկացումները ներառվում են սույն ենթակետում նշված պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերում.

4) որ սույն որոշման 4-րդ կետի 13-16-րդ ենթակետերում նշված վերաբաշխումները, լրացումները և փոփոխությունները, ինչպես նաև սույն որոշման 4-րդ կետի 5-րդ ենթակետում նշված ծախսերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից սահմանված կարգերի համաձայն.

5) որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից Հայաստանի Հանրապետության անունից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով իրականացվող ծառայությունների դիմաց այդ ծառայությունների պատվիրատուներից ստացվող վճարների գումարները՝

ա. մուտքագրվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանն սպասարկող Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով իրականացվող ծառայությունների ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N 265-Ն որոշման 1.7-րդ

կետի համաձայն բացված համապատասխան արտաբյուջետային հաշվին: Սահմանել, որ այդ հաշիվը գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը,

բ. հատկացվում են նշված ծառայությունները մատուցած համապատասխան համակարգի ստորաբաժանումներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվող 2015 թվականի ծախսերի ամփոփ նախահաշիվների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից յուրաքանչյուր ստորաբաժանման գծով հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան.

6) որ սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված՝ Հայաստանի Հանրապետության անունից մատուցվող համապատասխան ծառայությունների պատվիրատուների հետ կնքվող պայմանագրերում Հայաստանի Հանրապետության անունից պայմանագրային կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը.

7) որ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում ներկայացված՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 02 դասի «05. Ավելացված արժեքի հարկի վերադարձ» ծախսային ծրագրի գծով նախատեսված բյուջետային հատկացումները ենթակա են ուղղման բացարձակապես ավելացված արժեքի հարկի գծով հարկատուների մոտ առկա գերավճարների վերադարձմանը: Ավելացված արժեքի հարկի գծով հարկատուների մոտ առկա գերավճարի գումարները ծախսային հաշվից հաշվեգրվում են ավելացված արժեքի հարկի համապատասխան եկամտային հաշվին և «բյուջետային եկամուտների վերադարձ» գործառնության միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմնավորող փաստաթղթերի՝ գերավճարի վերադարձման մասին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան եզրակացության և վերադարձման ենթակա գումարների հիմնավորվածության մասին տեղեկանքի առկայության դեպքում ավելացված արժեքի հարկի գծով եկամտային հաշվից իրականացվում է գերավճարի գումարների վերադարձը: Նշված «05. Ավելացված արժեքի հարկի վերադարձ» ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների ամբողջ ծավալի սպառման պայմաններում ավելացված արժեքի հարկի գծով հարկատուների մոտ առկա գերավճարների վերադարձը 2015 թվականի ընթացքում շարունակվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ավելացված արժեքի հարկի ընթացիկ մուտքերի հաշվին.

8) որ սույն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջը չի տարածվում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան՝ պետական հիմնարկների համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների համաձայն բացված և

«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում արտացոլման ենթակա արտաբյուջետային միջոցների հաշիվների, ինչպես նաև դրամարկղերում այդ հաշիվների միջոցների մնացորդների վրա.

9) որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող վճարների գումարների օգտագործման ուղղությունները 2005 թվականի տարեկան ծախսերի նախահաշվի ձևով հաստատելու, նախահաշվի կատարման հետ կապված առանձին հարցեր կանոնակարգելու և ծախսերի նորմատիվները հաստատելու մասին» N 1176-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված նորմատիվները, 2-րդ կետի «դ» ենթակետը, ինչպես նաև 4-րդ կետը գործում են նաև 2015 թվականի ընթացքում.

10) որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 1018-Ն և 2014 թվականի փետրվարի 6-ի N 194-Ն որոշումներով նախատեսված սահմանաչափերի սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության ընդունած որոշումներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեներից տրամադրման համար նախատեսված, սակայն տրամադրված վարկերի գումարները կարող են տրամադրվել 2015 թվականին.

11) որ պետական կառավարման մարմինները սույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով հաստատված՝ պետական գաղտնիք չպարունակող գնումների պլանով նախատեսված մրցակցային ընթացակարգով գնումների (բացառությամբ արտաբյուջետային միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլաններում նախատեսված գնումների, ինչպես նաև ավիասպասարկման ծառայությունների) կատարման հայտարարությունները և (կամ) հրավերները պետք է հրապարակեն, ինչպես նաև մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով կնքված պայմանագրերի հիման վրա համաձայնագրերը կնքեն մինչև 2015 թվականի մարտի 30-ը: Սույն ենթակետով նախատեսված ժամկետի չպահպանման դեպքում այդ գնումների մասով գործընթացների կազմակերպումը, ինչպես նաև այդ միջոցների վերաբաշխումը (ներառյալ գնման ձևերի փոփոխությունը) պետական կառավարման մարմինը կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի գրավոր համաձայնությամբ.

12) որ պետական իշխանության մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին ավտոմեքենաների ձեռքբերումը պետք է

իրականացվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 830-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 24-ի N 938-Ա հրամանով հաստատված չափորոշիչներին համապատասխան՝ անկախ գնումների պլանում այլ չափորոշիչներով դրանց ներառված լինելու հանգամանքից.

13) որ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 09 բաժնի 06 խմբի 01 դասի «40. Սոցիալապես անապահով աշակերտներին անվճար դասագրքերով ապահովման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով նախատեսված գումարների տրամադրման վրա չեն տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման դրույթները.

14) որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության գծով սույն որոշման N 10 հավելվածով նախատեսված բյուջետային հատկացումների գումարը ներառում է պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների սահմաններում կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների և Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի ֆինանսավորման համար Երևանի քաղաքապետարանին հասանելիք գումարը՝ 2015 թվականի առաջին եռամսյակում՝ 168,858.0 հազ. դրամ, առաջին կիսամյակում՝ 337,716.0 հազ. դրամ, ինն ամսում՝ 506,574.0 հազ. դրամ և տարեկան՝ 675,432.0 հազ. դրամ.

15) սույն որոշման N 5 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 02 բաժնի 05 խմբի 01 դասի «02. Այլընտրանքային ծառայության ապահովում» ծրագրով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության) այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման գումարները պետք է վճարեն այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպությունների միջոցով:

2. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան նյութական աջակցության համար «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 04 խմբի 02 դասի «01. Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպու-

թյուններին, արիմիություններին» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գծով նախատեսված հատկացումների (տարեկան 75,693.1 հազ. դրամ)՝ ըստ առանձին կուսակցությունների բաշխումը՝ համաձայն N 9 հավելվածի (հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի ընտրությունների արդյունքներով կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից հավաքված ձայների թվի մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալները).

2) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման այն ծրագրերի ցանկը, որոնց գծով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը վերապահված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքները փոխանցվում են Երևանի քաղաքապետարանին՝ համաձայն N 10 հավելվածի.

3) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին պետության կարիքների (բացառությամբ արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության պետական հիմնարկների և ներկայացուցիչների գործունեության ապահովման ծրագրերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և այլ արտաքին դոնորների աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող նպատակային ծրագրերի) համար 2015 թվականին իրականացվող գնումների պլանը՝ ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական/գործառական դասակարգման՝ համաձայն N 12 հավելվածի.

4) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող փաստաթուղթը՝ համաձայն N 11 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Հարկային ծառայության մարմնի համակարգի և մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերի տպագրության համար արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2015 թվականի տարեկան նախահաշիվները՝ համաձայն N 13 հավելվածի N 6 աղյուսակի:

3. Թույլատրել Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝ անհրաժեշտության դեպքում՝

1) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 14-րդ կետով նախատեսված կարգով ապահովել Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ու դրամաշնորհային ծախսային ծրագրերի կատարումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ իրականացվող ծրագրերի գծով նախատեսված հատկացումների՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասում (բացառությամբ սույն որոշման 4-րդ կետի 14-րդ ենթակետում նշված դեպքի), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված վերաբաշխումները և տեղաշարժերը կատարելու վերաբերյալ.

3) սույն որոշման 4-րդ կետի 13-15-րդ ենթակետերում նշված վերաբաշխումները և տեղաշարժերը կատարելու համար համաձայնություն ստանալու նպատակով համապատասխան առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն.

4) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված իրավասությունների իրականացման շրջանակներում, սույն որոշման 4-րդ կետի 13-15-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում կատարվող հատկացումների վերաբաշխումներին համապատասխան, ինչպես նաև, ելնելով պետական մարմինների կանոնադրական լիազորությունների իրականացման արդյունավետության բարձրացման կամ ենթակա հիմնարկները՝ օրենքին համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմակերպելու անհրաժեշտությունից, սույն որոշման N 12 հավելվածով՝ այդ մարմինների գծով սահմանված գնումների պլանում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ համաձայնեցված փոփոխությունների (այդ թվում՝ նաև գնման ձևերի գծով) և (կամ) լրացումների կատարումը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքի):

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ՝

ա. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 14-րդ կետի «բ»-«ե» ենթակետերով և 15-19-րդ կետերով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված իրավասությունների իրականացման վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում),

բ. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով պետական կառավարման տարբեր մարմինների կողմից իրականացվող ծախսային ծրագրերով Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված հատկացումների գումարների միջոցառումային վերաբաշխումներ (բացառությամբ սույն կետի 14-րդ ենթակետով նախատեսված դեպքերի) կատարելու գծով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված իրավասությունների իրականացման վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում՝ պետական կառավարման մարմինների ներկայացմամբ կամ սեփական նախաձեռնությամբ),

գ. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով այդ օրենքի N 1 հավելվածում բյուջետային ծախսերի գործառական դասակարգման նույն բաժնին, խմբին և դասին պատկանող նույն ծախսային ծրագիրն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների միջև՝ նրանց գծով տվյալ ծրագիրն իրականացնելու համար օրենքով հաստատված հատկացումների վերաբաշխումներ կատարելու, ինչպես նաև այդ մարմինների ցանկում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու գծով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված իրավասությունների իրականացման վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում՝ պետական կառավարման մարմինների ներկայացմամբ),

դ. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 13-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված իրավասությունների վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում),

ե. փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2015 թվականի պետական պատվերի վերաբերյալ՝ մեկամսյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններից ստացվող առաջարկությունները քննության առնել այդ առաջարկությունները

սույն որոշման 5-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված պահանջին համապատասխանելու դեպքում.

3) բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատված բյուջետային ելքերի ֆինանսավորման համար միջոցների անբավարարության առաջացման դեպքում, ժամանակավորապես՝ մինչև 2015 թվականի դեկտեմբերի 25-ը վերականգնելու պայմանով, ներգրավել առևտրային կազմակերպություններում պետական բաժնեմասի մասնավորեցումից (սեփականաշնորհումից) ստացված միջոցների կուտակման նպատակով բացված գանձապետական միասնական հաշվի սեփականաշնորհման հատուկ ենթահաշվում միջոցների առկա մնացորդի՝ այդ օրենքով նախատեսված բյուջետային ելքերի ֆինանսավորմանը չուղղված գումարները՝ ներկայացնելով այդ ենթահաշվի շարժը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում (առանձին հավելվածով).

4) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կողմից դուրս գրված կանխիկ դրամի ստացման չեկերի կանխիկացումն ապահովել Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի հետ կնքված պայմանագրերին համապատասխան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ պայմանագրի բանկերին տրվող սպասարկման միջին վճարը չպետք է գերազանցի բանկերի կողմից կանխիկացված գումարի 0,1 տոկոսը.

5) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետում նշված վճարումներն իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ առանց սահմանափակման՝ դրանց գծով կատարված ծախսերը և ստացված եկամուտներն այդ կետին համապատասխան արտացոլելով Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում.

6) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետում նշված վճարումներն իրականացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից այդ նպատակով հատկացումներ նախատեսող Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման առկայությամբ՝ դրանց գծով կատարված ծախսերը և ստացված եկամուտներն այդ կետին համապատասխան արտացոլելով Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում.

7) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի NN 16, 19-1, 19-2, 20-1 - 20-3, 21-1 - 21-15, 22-1 - 22-3, 23, 24, 25, 26 աղյուսակներում նշված ծրագրերն իրականացնող պետական իշխանության մարմինների ներկայացմամբ, ներկայացման հիմքերը բավարար ճանաչվելու դեպքում, թույլատրել փոփոխությունների և լրացումների կատարումը նշված աղյուսակներում.

8) մեկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության անունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հետ կնքել պայմանագիր Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը՝ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը մարման ժամկետով, տարեկան 0,01 տոկոս տոկոսադրույքով 45,518,693.3 հազ. դրամ բյուջետային վարկ տրամադրելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը 1993-2014 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված բյուջետային վարկերի մարման ժամկետը մինչև 2020 թվականի հունվարի 1-ը երկարաձգելու մասին (բացառությամբ այն դեպքերի, երբ այդ վարկերի մարման ժամկետի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունների միջև ձեռք է բերվել համաձայնություն մարման այլ ժամկետների վերաբերյալ).

9) Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության համայնքներին սուբվենցիաներ հատկացնել համապատասխան համայնքների ղեկավարների և այդ սուբվենցիաների գծով հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների միջև կնքված սուբվենցիաների տրամադրման պայմանների մասին պայմանագրերի առկայության դեպքում.

10) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից Հայաստանի Հանրապետության անունից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման գծով իրականացվող ծառայությունների դիմաց այդ ծառայությունների պատվիրատուներից արտաբյուջետային հաշվին 2015 թվականին ստացվող վճարների մուտքագրումն ու դրանց հաշվին Հայաստանի Հանրապետության անունից ծառայություններ մատուցող՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների ֆինանսավորումն իրականացնել սույն որոշման 1-ին կետի 5-րդ ու 9-րդ ենթակետերին համապատասխան.

11) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան նյութական աջակցության համար «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյու-

ջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 04 խմբի 02 դասի «01. Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը սույն որոշմամբ հաստատված բաշխման համաձայն իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում այդ ծրագրի համար բացված գանձապետական հաշվից միջոցների ելքագրման և կուսակցությունների ու կուսակցությունների դաշինքների բանկային հաշիվներին փոխանցման միջոցով՝ նրանց կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ առանց լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու.

12) ապահովել պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող ընկերություններում պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասին (բաժնետոմսին) համապատասխանող շահութաբաժինների՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե վճարման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով շահութաբաժինների վճարումից ազատված ընկերությունների), իսկ 50 տոկոս և ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող այն ընկերությունների գծով, որոնց լիազորված մարմինները ներկայացնում են շահութաբաժինների սահմանված չափի նվազեցման վերաբերյալ առաջարկություններ՝ նաև զուտ շահույթի բաշխման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը.

13) պետական իշխանության մարմնի ներկայացմամբ, պահպանելով նրա կողմից իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի NN 1 և 3 հավելվածներով նախատեսված ծախսային ծրագրի գծով հաստատված տարեկան հատկացումների ընդհանուր գումարը և այդ գումարի՝ սույն որոշման NN 5 և 8 հավելվածներով սահմանված եռամսյակային բաշխման աճողական գումարները, ներկայացման հիմքերը բավարար ճանաչվելու դեպքում, օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ կետերով սահմանված շրջանակներում թույլատրել տվյալ ծրագրի գծով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով նախատեսված տարեկան և եռամսյակային գումարների վերաբաշխումներ՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ սահմանված հոդվածների.

14) պետական իշխանության մարմնի ներկայացմամբ, պահպանելով նրա կողմից իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով նախատեսված բոլոր ծախսային ծրագրերի գծով հաստատված տարեկան հատկացումների հանրագումարը և այդ հանրագումարի՝ սույն որոշման N 5 հավելվածով սահմանված եռամսյակային բաշխման աճողական

գումարները, ներկայացման հիմքերը բավարար ճանաչվելու դեպքում թույլատրել այդ ծրագրերի գծով նախատեսված տարեկան և եռամյակային հատկացումների գումարների միջծրագրային վերաբաշխումներ.

15) պետական իշխանության մարմնի ներկայացմամբ, պահպանելով նրա կողմից արտաքին աղբյուրներից ստացվող ծրագրային վարկային կամ դրամաշնորհային միջոցների հաշվին իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով նախատեսված ծախսային ծրագրի գծով հաստատված տարեկան հատկացումների ընդհանուր գումարը, ներկայացման հիմքերը բավարար ճանաչվելու դեպքում թույլատրել տվյալ ծրագրի գծով սույն որոշման N 5 հավելվածով սահմանված բյուջետային հատկացումների եռամյակային գումարների միջեռամյակային տեղաշարժեր (հաշվի առնելով նաև հատկացումների ավելացման առաջարկվող եռամյակներում նշված ծախսերի ֆինանսավորման համապատասխան աղբյուրների առկայությունը).

16) պետական իշխանության մարմնի ներկայացմամբ, սույն որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում՝ ներկայացման հիմքերը բավարար ճանաչվելու դեպքում թույլատրել սույն որոշման N 12 հավելվածում այդ մարմնի գնումների պլանում փոփոխությունների (այդ թվում՝ նաև գնման ձևերի գծով) և (կամ) լրացումների կատարումը.

17) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին եռամյակային հաշվետվություններում «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 3-րդ և 6-8-րդ հոդվածներով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով հաստատված բյուջետային մուտքերի և ելքերի գումարները, սույն որոշմամբ սահմանված բյուջետային մուտքերի և ելքերի եռամյակային (աճողական) ցուցանիշները, ինչպես նաև դրանց դիմաց ստացված մուտքերն ու կատարված ելքերն արտահայտել «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի և 11-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով նաև սույն կետի 13-16-րդ ենթակետերի համաձայն կատարված վերաբաշխումները, տեղաշարժերը, լրացումները և փոփոխությունները.

18) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

ա. 01 բաժնի 01 խմբի 03 դասի «08. Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարման ծախսեր», 01 բաժնի 01 խմբի 02 դասի «12. Բլումբերգ և

Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալների տեղադրման և սպասարկման վճար» ծախսային ծրագրերով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը սույն որոշման համաձայն իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում նշված ծրագրերի համար բացված գանձապետական հաշիվներից միջոցների ելքագրման միջոցով՝ այդ ծրագրով նախատեսված ծառայությունները մատուցող սույն պարբերությունում նշված կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված գրավոր պահանջի (ինվոյսի) հիման վրա՝ առանց լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու,

բ. 01 բաժնի 01 խմբի 02 դասի «03. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով)» ծախսային ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտե հիմնադրամի (IASCF) միջև կնքված «Սահմանափակ տարածքներում հեղինակային իրավունքից հրաժարվելու վերաբերյալ» համաձայնագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը սույն որոշման համաձայն իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանում այդ ծրագրի համար բացված գանձապետական հաշվից միջոցների ելքագրման միջոցով՝ սույն պարբերությունում նշված հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված գրավոր պահանջի (ինվոյսի) հիման վրա՝ առանց լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու,

գ. 01 բաժնի 01 խմբի 02 դասի «04. Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծախսեր» ծախսային ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ծախսեր» հոդվածով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և ՄԱԿ-ի առևտրային զարգացման կազմակերպության (UNCTAD) միջև ստորագրված DMFAS համակարգի սպասարկման պայմանագրով նախատեսված DMFAS 6.0 համակարգի տեխնիկական սպասարկման և 2013 թվականի սեպտեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության և արտարժութային պետական պարտատոմսերի գլխավոր տեղաբաշխողների միջև ստորագրված Բաժանորդագրության պայմանագրի համաձայն Իռլանդական ֆոնդային բորսայում Հայաստանի Հանրապետության արտարժութային պետական պարտատոմսերի ցուցակման նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գծով նախատեսված ծախսերի ֆինանսավորումը սույն որոշման համաձայն իրականացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապե-

տարանում այդ ծրագրի համար բացված գանձապետական հաշվից միջոցների ելքագրման միջոցով՝ սույն պարբերությունում նշված կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացված գրավոր պահանջի (ինվոյսի) հիման վրա՝ առանց լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու.

19) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 01 դասի «01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրով (սույն ենթակետում այսուհետ՝ ծրագիր) սահմանված հատկացումներին ամրագրված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներից (սույն ենթակետում այսուհետ՝ բազային հոդվածներ) տարբերվող այլ հոդվածներով (սույն ենթակետում այսուհետ՝ տարբերվող հոդվածներ) և Հայաստանի Հանրապետության կառավարությանը նախատեսված հատկացումների գումարից որևէ այլ բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչին (սույն ենթակետում այսուհետ՝ այլ ԲԳԿ) հատկացումների կատարման դեպքում դրանց ներքին միջհոդվածային և միջգերատեսչական վերաբաշխման միջոցով՝ սույն ենթակետում նշված Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով տարբերվող հոդվածներով և այլ ԲԳԿ-ների գծով նախատեսված հատկացումների չափով ավելացնել նշված ծրագրի գծով համապատասխան գերատեսչությունների նույն այդ տարբերվող հոդվածներով նախատեսված հատկացումները՝ նույն չափով պակասեցնելով բազային հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության գծով նախատեսված հատկացումները: Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում սույն ենթակետում նշված վերաբաշխումներն արտացոլել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով հատկացված գումարների չափով: Համանման մոտեցում կիրառել նաև «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 03 դասի «03. Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ» և «04. Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ», 10 բաժնի 03 խմբի 01 դասի «03. Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում հրաժեշտի ծիսակատարության և թաղման կազմակերպում, գերեզմանի բարեկարգման, մահարձանի և հուշատախտակի պատրաստման ու տեղադրման աշխատանքներին աջակցություն» ծրագրերով Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից ընդունված որոշումներով, ինչպես նաև 01 բաժնի 01 խմբի 01 դասի «09. ՀՀ վերահսկիչ պալատի պահուս-

տային ֆոնդ», 03 բաժնի 03 խմբի 01 դասի «03. ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ» և «04. ՀՀ դատարանների պահուստային ֆոնդ», 03 բաժնի 04 խմբի 01 դասի «02. ՀՀ դատախազության պահուստային ֆոնդ», ինչպես նաև 03 բաժնի 07 խմբի 01 դասի «02. ՀՀ քննչական կոմիտեի պահուստային ֆոնդ» և «05. ՀՀ հատուկ քննչական ծառայության պահուստային ֆոնդ» ծրագրերով իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումներով հատկացումների կատարման դեպքում.

20) սույն որոշման 7-րդ կետի 1-ին ենթակետում, 9-րդ, 11-րդ կետի 1-ին ենթակետում, 13-րդ կետում, 14-րդ կետի 3-րդ ենթակետում, 15-րդ կետում, 16-րդ կետի 1-ին ենթակետում, 17-րդ կետում, 18-րդ կետի 1-ին ենթակետում, 19-րդ կետի 1-ին ենթակետում, 22-րդ կետում, 23-րդ կետի 2-րդ ենթակետում, 27-րդ կետի 1-ին ենթակետում և 28-րդ կետում նշված՝ պետական պատվերների, ծրագրերի և ծախսերի ֆինանսավորումը կատարել դրանք Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո: Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համաձայնությամբ՝ սույն ենթակետում նշված պետական պատվերների, ծրագրերի և ծախսերի ֆինանսավորումն առանձին դեպքերում կարող է իրականացվել նաև մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դրանց հաստատումը.

21) դրական եզրակացություն չտալ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ նախատեսող այն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերին, որոնցով առաջարկվող հատկացումների եռամյակային բաշխման (աճողական) գումարների ընդունումը կհանգեցնի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծախսային ծրագրի գծով հաստատված հատկացումների՝ սույն որոշման N 5 հավելվածով սահմանված եռամյակային բաշխման (աճողական) գումարների գերազանցմանը.

22) սույն որոշման 20-րդ կետին համապատասխան կատարել փոփոխություններ Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի և Գերմանիայի զարգացման բանկի վարկային ծրագրերով «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ- ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություններին ենթավարկերի տրամադրման պայմանագրերում.

23) մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (սույն ենթակետում այսուհետ՝ ոստիկանություն) մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 483-Ն որոշմամբ

նախատեսված ծրագրերի գծով 2015 թվականի արտաբյուջետային հաշիվներից կատարվող ծախսերի նախահաշիվների հաստատումը, այդ ծրագրերի գծով 2015 թվականի առաջին եռամսյակում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ընթացիկ ծախսերի յուրաքանչյուր հոդվածով (սույն ենթակետում այսուհետ՝ ընթացիկ ծախսերի հոդված) ֆինանսավորումը համապատասխան արտաբյուջետային հաշիվներից իրականացնել դրանցում առկա միջոցների սահմաններում, սույն ենթակետում նշված որոշմամբ հաստատված ոստիկանության արտաբյուջետային հաշիվների միջոցների ծախսման 2014 թվականի տարեկան նախահաշիվներում ընթացիկ ծախսերի համապատասխան հոդվածներով նախատեսված տարեկան գումարների 1/4-ից ոչ ավելի չափով (բացառությամբ «աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված ծախսերի, որոնց ֆինանսավորումն իրականացնել հաշվարկված ամբողջ ծավալով)՝ ըստ ոստիկանության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացվող 2015 թվականի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման առաջին եռամսյակի նախահաշիվների.

24) սույն որոշման 1-ին կետի 10-րդ ենթակետում նշված վարկերի գումարները 2015 թվականին տրամադրելու դեպքում՝ համապատասխան գումարները արտահայտել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում նշված գումարների չափով «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 4 հավելվածի՝ կայունացման դեպոզիտային հաշվից ելքերի ֆինանսավորմանն ուղղվող միջոցների (կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործման) և վարկերի ու փոխատվությունների տրամադրման գծով ծրագրային ցուցանիշների ավելացման մասին առաջարկություն ներկայացնելով Հայաստանի Հանրապետության կառավարություն.

25) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 10 բաժնի 09 խմբի 02 դասի «02. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծախսային ծրագրի գծով բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող որևէ մարմնից նշված ծրագրով այդ մարմնի գծով հատկացումների տարեկան և (կամ) եռամսյակային (աճողական) գումարների ավելացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հայտ ներկայացվելու դեպքում, ստացված հայտը ներկայացնելու հիմքերը բավարար ճանաչվելու և այդ ավելացումը ծրագրի բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների գծով սահմանված հատկացումների վերաբաշխման և (կամ) եռամսյակային (աճողական) գումարների միջեռամսյակային տեղաշարժի միջոցով ծրագրի գծով նախատեսված հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում ֆինանսավորման աղբ-

յուրներով ապահովելու հնարավորության առկայությամբ, կատարել դրա համար անհրաժեշտ բյուջետային հատկացումների վերաբաշխումներ և (կամ) միջեռամյակային տեղաշարժեր.

26) Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններում սույն որոշմամբ հաստատված եռամյակային ծրագրային ցուցանիշներն արտացոլել առանց սույն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետով հաստատված ցուցանիշների (վերջիններս արտացոլելով որպես պետական բյուջեում սահմանված կարգով կատարված լրացումներ).

27) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիման վրա Դիլիջանի ուսումնական կենտրոնի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, վերակառուցման և Սյունիքի տարածաշրջանային մաքսատան կառուցման, այդ կառույցների շինարարության որակի տեխնիկական հսկողության աշխատանքների գնումն իրականացնել բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

5. Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝

1) 2015 թվականի վերջին աշխատանքային օրվա ավարտին՝ համակարգի բյուջետային հիմնարկների դրամարկղերում և գանձապետական հաշիվներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների առկա մնացորդները 2015 թվականի բյուջետային տարվա վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես 2015 թվականի բյուջետային տարում չօգտագործված միջոցներ.

2) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ արտաքին աղբյուրներից վարկերի և պաշտոնական դրամաշնորհների ստացման նախապայմանների ապահովման համար.

3) սահմանել խիստ հսկողություն ենթակա հիմնարկների կողմից իրականացվող ծախսերի նկատմամբ, կանխել և թույլ չտալ հաստատված նախահաշիվների առանձին ծախսային հոդվածների նկատմամբ փաստացի ծախսերի գերազանցում.

4) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին և դրանց ենթակայության պետական հիմնարկներին, պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի (այդ թվում՝ տարածքների) վարձակալության պայմանագրերում, վարձատուի համաձայնությամբ, վարձակալի կողմից իր միջոցների հաշվին վարձակալված գույքից (այդ թվում՝ տարածքից) անբաժանելի բարելավումների կատարման հնարավորություն նախատեսել միայն այդ բարելավումների արժեքի՝ ինչպես պայմանագրի գործողության ընթացքում, այնպես էլ պայմանագրի գործողության դադարեցումից հետո վարձատուի կողմից փոխհատուցման բացառման վերաբերյալ դրույթի նախատեսման դեպքում: Մինչև սույն որո-

շումն ուժի մեջ մտնելը՝ կնքված վարձակալության պայմանագրերի գործողության ընթացքում, առանց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության թույլտվության, չհամաձայնել նշված բարելավումների իրականացմանը.

5) մինչև 2015 թվականի փետրվարի 10-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համաձայնեցմանը ներկայացնել օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային ծրագրեր իրականացնող՝ ենթակա գրասենյակների 2015 թվականի պահպանման ծախսերի տարեկան (եռամսյակային աճողական բաշխմամբ) նախահաշիվները, հաստիքացուցակները և համապատասխան ծրագրերի տարեկան ծախսերի նախահաշիվները՝ ըստ ծրագրերի բաղադրիչների՝ դրամային արտահայտությամբ.

6) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրել սույն որոշման N 6 հավելվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի՝ եռամսյակային կտրվածքով ծրագրավորված եկամուտների հավաքագրման արդյունքների և դրանց՝ ծրագրային ցուցանիշներից շեղումների պատճառների մասին հաշվետվություն (յուրաքանչյուր մարմինը՝ իր մասով, ըստ առանձին եկամտատեսակների)՝ մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 5-ը.

7) Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից համայնքներին տրամադրվող սուբվենցիաների գծով հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսանալու դեպքում այդ սուբվենցիաները տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքների ղեկավարների հետ կնքել սուբվենցիաների տրամադրման պայմանների մասին պայմանագրեր.

8) անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության 2015 թվականի կապիտալ շինարարության և հիմնանորոգման ծախսերի պետական պատվերով նախատեսված առանձին օբյեկտների գծով սահմանված հատկացումների գումարների և դրանց նախահաշվային արժեքների միջև դրական տարբերության և (կամ) մրցույթների արդյունքներով տնտեսված գումարների առաջացման դեպքում ազատված բյուջետային հատկացումների օգտագործման ուղղությունների վերաբերյալ.

9) յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 25-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել բացատրագիր իրենց կողմից ղեկավարվող մարմինների կողմից իրականացվող ծրագրերի գծով սույն որոշմամբ սահմանված բյուջետային հատկացումների եռամսյակային (աճողական) սահմանաքանակների չիրացման պատճառների վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն այդ սահմանաքանակների չիրացված մասի 2015 թվականի մնացած ժամանակահատվածում իրացման գծով ձեռնարկված

միջոցների կամ այդ մասի հետագա իրացման աննպատակահարմարության կամ անհնարի-նության մասին.

10) ապահովել պատշաճ հսկողություն ենթակա պետական հիմնարկների և կազմակեր-պությունների կողմից «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 10 բաժնի 09 խմբի 02 դասի «02.Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծախսային ծրագրով նախատեսված հատկացումների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շրջանակներում նպատակային օգտագործման նկատմամբ.

11) Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն առաջարկություններ ներկայացնելիս՝ դրանցում նշել այդ հատկացումների տրամադրման ժամանակացույցը՝ ըստ եռամսյակների (նաև աճողական), կատարվելիք գնումների պլանը և նշված հատկացման շնորհիվ իրա-կանացվելիք ծրագիրը (միջոցառումը) բնութագրող արդյունքի ցուցանիշների եռամսյակային (աճողական) կանխատեսումը:

6. Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող ընկերությունների բաժնետիրոջ իրավասություններ իրականացնող՝ Հայաստանի Հանրա-պետության կառավարության կողմից լիազորված մարմինների ղեկավարներին՝ ապա-հովել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պե-տության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպություն-ների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետու-թյան պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կա-ռավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ սահմանված չափով և հաստատված կարգով ու ժամկետներում շահութաբաժինների վճարումը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե.

2) պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս (բաժնետոմս) ունեցող ընկե-րությունների՝ նախորդ տարիների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում շահու-թաբաժինների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ առաջացած պարտքերի մարումը՝ մինչև 2015 թվականի հուլիսի 1-ը:

7. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ ռազմագիտության կաբինետների վերականգնման, տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման, ինչպես նաև հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման, հրատարակման և ձեռքբերման վերաբերյալ՝ մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել՝

ա. եռամյա ժամկետում «Ուսանողական մարզական միջոցառումներ» ծրագրի շրջանակներում Երևանում կայանալիք շախմատի Եվրոպայի համալսարանական առաջնության ծախսերի նախահաշիվը,

բ. մինչև 2015 թվականի սեպտեմբերի 10-ը՝ 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ և 2015/2016 ուսումնական տարվա սկզբում դասարանների փաստացի կոմպլեկտավորման արդյունքում հանրակրթական դպրոցների աշակերտների թվի (ներառյալ նախադպրոցական և ներառական կրթության մեջ ընդգրկված երեխաները) մասին տվյալները՝ տարբերակված ըստ հարթավայրային, լեռնային, բարձր լեռնային բնակավայրերում գտնվող դպրոցների (ներառյալ ավագ դպրոցները), ինչպես նաև 2015/2016 ուսումնական տարվա սկզբի դրությամբ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների և նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների սովորողների թվի վերաբերյալ տվյալները:

8. Միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրագործվող նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի գծով բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝ իրենց իրավասության սահմաններում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները 2015 թվականին համապատասխան նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարման հնարավորինս բարձր մակարդակ ապահովելու ուղղությամբ:

9. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքների ղեկավարներին պատվիրակված լիազորությունների իրականացման 2015 թվականի ծախսերի կատարման նորմատիվների և պատվիրակվող լիազորությունների բնութագրերի (դրանց նկարագրության, ինչպես նաև որակական և (կամ) քանակական չափանիշների) վերաբերյալ՝ մեկամսյա ժամկետում:

10. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել «Կինոնկար-

ների արտադրություն» ծրագրի շրջանակներում արտադրվող ֆիլմերի գծով ծախսերի նախահաշիվները:

11. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին՝

1) մինչև 2015 թվականի հունիսի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման վերաբերյալ.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել՝

ա. Հայաստանի Հանրապետության Նախագահի անվանական թոշակի արժանացած Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի մարզիկների և նրանց մարզիչների 2015 թվականի ցուցակը,

բ. 2016 թվականի Ռիո դե Ժանեյրոյի 31-րդ Օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության նախապատրաստման և մասնակցության ապահովման ծախսերի նախահաշիվը,

գ. Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և հասարակական կյանքին երիտասարդության մասնակցության խթանմանը, Համահայկական, հանրապետական և միջազգային երիտասարդական միջոցառումների կազմակերպման և միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանն ուղղված ծրագրերի ծախսերի նախահաշիվները:

12. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել՝

1) Հայաստանի Հանրապետության դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման գծով Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների բաշխումն ըստ առանձին դեսպանությունների և ներկայացուցչությունների՝ եռամսյակային (աճողական) կտրվածքով.

2) միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների ընդհանուր գումարի բաշխումն ըստ առանձին կազմակերպությունների՝ եռամսյակային (աճողական) կտրվածքով:

13. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ՝

1) քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքների ղեկավարներին պատվիրակված լիազորությունների իրականացման 2015 թվականի ծախսերի կատարման նորմատիվների և պատվիրակվող լիազորությունների բնութագրերի (դրանց նկարագրության, ինչպես նաև որակական և (կամ) քանակական չափանիշների) վերաբերյալ.

2) փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2015 թվականի պետական պատվերի վերաբերյալ.

3) հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների վերաբերյալ:

14. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին՝

1) «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման ծրագրերի (ներառյալ սույն որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետով) գծով սահմանված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչի իրավունքները վերապահել Երևանի քաղաքապետարանին՝ պայմանով, որ՝

ա. այդ լիազորությունների իրականացման հետ կապված ծախսերը պետք է իրականացվեն պետական կառավարչական հիմնարկների կողմից 2015 թվականին իրականացվող նմանատիպ ծախսերի կատարման և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան,

բ. սույն որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետում նշված և N 10 հավելվածում ներկայացված ծրագրերի գծով նախատեսված բյուջետային միջոցների տնօրինման և դրա շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունները սահմանված կարգով կներկայացվեն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն,

գ. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 04 բաժնի 05 խմբի 05 դասի «01. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով նախատեսված 2,431,534.0 հազ. դրամ գումարից 1,846,367.5 հազ. դրամն ուղղել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկմանը, իսկ 585,166.5 հազ. դրամը՝

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի վարկային ծրագրերով ենթավարկային պայմանագրերով ընկերությանը նախատեսված վարկերի գծով առաջացած պարտավորությունների կատարմանը.

2) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև կնքվող սուբվենցիաների տրամադրման պայմանագրերում նախատեսել, որ սուբվենցիաների գումարների նպատակային օգտագործման նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունն իրականացնում է նախնական փաստաթղթային հսկողություն, իսկ հետավարտական հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

3) մեկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01 բաժնի 08 խմբի 01 դասի «02. Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարիմններին» և «04. Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» ծրագրերի գծով նախատեսված հատկացումների բաշխման վերաբերյալ.

4) սույն որոշման N 5 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 02 բաժնի 05 խմբի 01 դասի «02. Այլընտրանքային ծառայության ապահովում» ծրագրով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության գծով նախատեսված ֆինանսական միջոցները փոխանցել Երևանի քաղաքապետարանին՝ Երևան քաղաքի այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպությունների միջոցով այլընտրանքային աշխատանքային ծառայողների դրամական բավարարման գումարները վճարելու համար:

15. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ երկամյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն 2015 թվականի հետևյալ ծրագրերի վերաբերյալ՝

1) փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցության.

2) զբոսաշրջության աջակցության ծառայությունների.

3) ստանդարտների մշակման ծառայությունների.

4) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների.

5) պետական աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացման.

6) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության.

7) Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքների բարեփոխման.

8) Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման:

16. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման և տրամադրման և Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցություն ցուցաբերելու նպատակով նախատեսված հատկացումների՝ ըստ առանձին ստացողների բաշխման վերաբերյալ՝ մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել «Մշակութային միջոցառումների իրականացում», «Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում», «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» և «Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակում» ծրագրերի գծով ծախսերի նախահաշիվները՝ մեկամսյա ժամկետում:

17. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին՝ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2015 թվականի պետական պատվերի վերաբերյալ:

18. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախագծային (այդ թվում՝ հեղինակային հսկողության) և տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացման համար նախատեսված՝ սույն որոշման N 5 հավելվածի N 12 աղյուսակում ներկայացված գումարների օգտագործման ծրագիրը (բաշխումն ըստ օբյեկտների).

2) մշտադիտարկում իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել սույն որոշման N 5 հավելվածի N 20 «Ճանապարհային ոլորտի կատարողական հիմնական ցուցանիշները» աղյուսակի ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և սույն որոշման 25 կետով ներկայացված ճանապարհային հիմնական կատարողական ցուցանիշների փաստացի արդյունքների վերաբերյալ (ներառյալ միջազգային անհարթության ինդեքսը) ամփոփ տեղեկատվություն 2015 թվականի առաջին

կիսամյակի կտրվածքով՝ մինչև 2015 թվականի հուլիսի 30-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև 2016 թվականի մարտի 1-ը:

19. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ՝

ա. ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին 2015 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման, ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների, չափաքանակների վերաբերյալ՝ երկամսյա ժամկետում,

բ. ոռոգման համակարգերի հիմնանորոգման 2015 թվականի ծրագրի վերաբերյալ՝ մեկամսյա ժամկետում.

2) մշտադիտարկում իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել սույն որոշման N 11 հավելվածի N 11.33 աղյուսակի «ՄԱՍ Ա: ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին կետում ներառված ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող մասնագիտացված 4 փակ բաժնետիրական ընկերությունների սպասարկման տարածքների հիմնական կատարողական ցուցանիշների փաստացի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ 2015 թվականի առաջին կիսամյակի կտրվածքով՝ մինչև 2015 թվականի հուլիսի 30-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև 2016 թվականի մարտի 1-ը.

3) «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերության համար Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 267,600.0 հազ. դրամ սուբսիդիայի գումարից 34,287.6 հազ. դրամն ուղղել ընկերության գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկմանը, իսկ 233,312.4 հազ. դրամը՝ Գերմանիայի զարգացման բանկի աջակցությամբ իրականացված «Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում» ծրագրի գծով 2010 թվականի փետրվարի 28-ին կնքված «Ենթավարկային պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» ենթավարկային պայմանագրով տրամադրված վարկի մայր գումարի մարմանը.

4) «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության համար Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 2,088,956.2 հազ. դրամ սուբսիդիայի գումարից 1,145,050.0 հազ. դրամն ուղղել ընկերության գործառնական գործունեության արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի ծածկմանը, իսկ 943,906.2 հազ. դրամը՝ Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրերի շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրերով տրամադրված ենթավարկի մայր գումարի մարմանը.

5) «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության համար Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 1,031,766.2 հազ. դրամ սուբսիդիայի գումարն ուղղել Գերմանիայի զարգացման բանկի աջակցությամբ իրականացված «Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում (1-ին և 2-րդ փուլեր)» վարկային ծրագրերի շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկի մայր գումարի մարմանը.

6) «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության համար Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված 756,892.7 հազ. դրամն ուղղել Գերմանիայի զարգացման բանկի աջակցությամբ իրականացված «Լոռի (Վանաձոր) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում (1-ին և 2-րդ փուլեր)» վարկային ծրագրերի շրջանակներում կնքված ենթավարկային պայմանագրերով տրամադրված վարկի մայր գումարի մարմանը:

20. «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների ֆինանսական առողջացմանը նպաստելու նպատակով՝

1) «Հայջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություններին ազատել Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի (2363-ARM(SF)), Եվրոպական ներդրումային բանկի և Գերմանիայի զարգացման բանկի վարկային ծրագրերով մինչև 2016 թվականի հունվարի 1-ը նախատեսված վարկերի սպասարկման (տոկոսավճարների) վճարման գծով առաջացած պարտավորություններից.

2) «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերություններին ազատել Գերմանիայի զարգացման բանկի «ՀՀ Շիրակի (Գյումրի) և Լոռու (Վանաձոր) մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման (2-րդ փուլ)», «ՀՀ Շիրակի (Գյումրի) և Լոռու (Վանաձոր) մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման (3-րդ փուլ)» և Եվրոպական ներդրումային բանկի «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման (3-րդ փուլ)» վարկային ծրագրերով մինչև 2016 թվականի հունվարի 1-ը նախատեսված վարկերի սպասարկման (տոկոսավճարների) վճարման գծով առաջացած պարտավորություններից:

21. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի NN 16, 19-1, 19-2, 20-1 - 20-3, 21-1 - 21-15, 22-1 - 22-3, 23, 24, 25, 26 աղյուսակներում նշված ծրագրերն իրականացնող պետական իշխանության մարմինների ղեկավարներին՝ սույն կետում նշված աղյուսակներում ընդգրկված՝ իրավաբանական անձ հանդիսացող սուբյեկտների և առանձին միջոցա-

ռումների ծախսերի նախահաշիվներում փոփոխությունների ու լրացումների կատարումը համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

22. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել անշարժ գույքի կադաստրի զարգացման 2015 թվականի համալիր ծրագիրը՝ մեկամսյա ժամկետում:

23. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումների կողմից Հայաստանի Հանրապետության անունից պայմանագրային հիմունքներով իրականացված ծառայությունների դիմաց պատվիրատուների կողմից պայմանագրով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում վճարումների չկատարման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել այդ պատվիրատուներից պարտքերի գումարների ստացումը.

2) մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2010 թվականի ապրիլի 29-ի N 483-Ն որոշմամբ նախատեսված ծրագրերի գծով արտաբյուջետային հաշիվների միջոցների ծախսման 2015 թվականի նախահաշիվները հաստատելու և այդ հաշիվների 2015 թվականի համար ծրագրավորվող մուտքերը և ելքերը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեում ներառելու վերաբերյալ:

24. Հայաստանի Հանրապետության մարզպետներին և Երևանի քաղաքապետին՝

1) մինչև 2015 թվականի սեպտեմբերի 10-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել 2015 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ և 2015/2016 ուսումնական տարվա սկզբում դասարանների փաստացի կոմպլեկտավորման արդյունքում հանրակրթական դպրոցների աշակերտների թվի (ներառյալ նախադպրոցական և ներառական կրթության մեջ ընդգրկված երեխաները) մասին տվյալները՝ տարբերակված ըստ հարթավայրային, լեռնային, բարձր լեռնային բնակավայրերում գտնվող դպրոցների, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների, ինչպես նաև 2015/2016 ուսումնական տարվա սկզբի դրությամբ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների թվի վերաբերյալ տվյալները.

2) սույն որոշման 5-րդ կետի 8-րդ ենթակետում նշված առաջարկությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հետ համաձայնեցված:

25. Հայաստանի Հանրապետության մարզպետներին՝ յուրաքանչյուրն իրեն վերաբերող մասով, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն ներկայացնել սույն որոշման N 5 հավելվածի N 20 «Ճանապարհային ոլորտի կատարողական հիմնական ցուցանիշները» աղյուսակի ճանապարհային հիմնական կատարողական ցուցանիշների փաստացի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն 2015 թվականի առաջին կիսամյակի կտրվածքով՝ մինչև 2015 թվականի հուլիսի 20-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև 2016 թվականի փետրվարի 18-ը:

26. Սույն որոշման N 11 հավելվածում ընդգրկված գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին՝

1) բյուջետային հաշվետվություններ ներկայացնելու համար սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ սույն որոշման N 11 հավելվածի՝ իրենց կողմից ղեկավարվող մարմիններին համապատասխանող աղյուսակներում նշված արդյունքի ցուցանիշների կատարման վերաբերյալ.

2) սույն որոշման N 5 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշներում փոփոխությունների կատարման մասին սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնելիս, միաժամանակ ներկայացնել դրանցից բխող առաջարկություններ նաև սույն որոշման N 11 հավելվածի՝ իրենց կողմից ղեկավարվող մարմիններին համապատասխանող աղյուսակներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին:

27. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝

1) եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն 2015 թվականի հետևյալ ծրագրերի վերաբերյալ՝

ա. պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար,

բ. պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման համար.

2) «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրի համար Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցները հատկացնել «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին:

28. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություններ՝

1) Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով ազգային փոքրամասնություններին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով նախատեսված հատկացումների՝ ըստ առանձին ստացողների բաշխման վերաբերյալ.

2) Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների ծրագրի և ըստ առանձին միջոցառումների ծախսերի նախահաշիվների վերաբերյալ:

29. «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում՝

1) «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե» բառերով).

2) կատարել փոփոխություններ և վերաբաշխումներ՝ համաձայն N 13 հավելվածի:

30. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման NN 1 - 12 հավելվածներում արտացոլվել են Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի ցուցանիշներում սույն որոշման 29-րդ կետի համաձայն կատարված փոփոխությունները և վերաբաշխումները:

31. Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության պահուստային ֆոնդից հատկացնել՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ 22,600.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով)՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 մանկապարտեզում «Ներառական մանկապարտեզի ստեղծում» պիլոտային ծրագրի իրականացման նպատակով, այդ թվում՝ 2015 թվականի առաջին եռամսյակում՝ 3,774.2 հազ. դրամ, 2015 թվականի առաջին կիսամյակում՝ 9,424.2 հազ. դրամ և 2015 թվականի ինն ամսում՝ 15,074.2 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն ենթակետով հատկացված ֆինանսական միջոցները սուբսիդիայի տրամադրման պայմանագրով հատկացնել «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ» հասարակական կազմակերպությանը.

2) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ 450,000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների շինարարություն» հոդվածով), այդ թվում 2015 թվականի առաջին եռամսյակում՝ 100,000 հազ. դրամ, 2015 թվականի առաջին կիսամյակում՝ 250,000,0 հազ. դրամ և 2015 թվականի ինն ամսում՝ 400,000.0 հազ. դրամ:

32. Առաջարկել՝

1) Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահին, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի նախագահին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահին և Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարմանն աջակցելու նպատակով առաջնորդվել սույն որոշման 1 - 5-րդ և 26-րդ կետերով.

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը տրամադրել սույն որոշման N 6 հավելվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի՝ եռամսյակային կտրվածքով ծրագրավորված մուտքերի հավաքագրման արդյունքների և դրանց ծրագրային ցուցանիշներից շեղումների պատճառների մասին հաշվետվություն՝ մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 5-ը:

33. Հույժ գաղտնի:

34. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ